ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/49» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «11» 07. 2019թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետ, Հ. Մելիքյան(ԳԱՊ),
ՀՀ ՁՈՒ ԹՎ անասնաբուժական ծառայության պետ, գնդապետ Ա. Գևորգյան
ՀՀ ՊՆ 41548 զորամասի հրամանատար, մայոր Ա. Միրաքյան:
Բացակայում է՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Գ.Տերյան)

1.1 Մասնակիցների «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը /հավելված 6, 6.1/ առկա են և համապատասխանում են ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Իմմունոֆարմ» ՍՊԸ, որտեղ հավելված 6.1 ներկայացված 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված են «GC-MS-MS, LC-MS-MS մեթոդներով վերլուծության համար կամ համարժեք», իսկ 55-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է «խցիկը պետք է պատրաստած լինի 306 Tl կամ համարժեք պողպատից»: Անհրաժեշտ է հստակեցնել ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ բացառելով «կամ համարժեք» բառերը: 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում են նաև հրավերով նախատեսված ռեագենտների պիտանելիության ժամկետի և արտադրողի կողմից տրված որակի հավաստող փաստաթուղթի վերաբերյալ տեղեկությունը, իսկ 55-րդ, 56-րդ և 57-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով նախատեսված փաթեթավորման և երաշխիքային ժամկետների վերաբերյալ տեղեկությունը: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է որակավորման փաստաթղթերի գնահատման նիստը՝ և 12.07.2019թ. ծանուցել մասնակցին սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունները և նիստը շարունակվել է:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ.N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, իսկ հրավերով նախատեսված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջներն չեն գնահատվում:

1.2 17.07.2019թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Իմմունոֆարմ» ՍՊԸ, «ԼԵՅԿՈ» ՍՊԸ և «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ն որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և վերջիններիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/49» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Գևորգյան

Գնահատող Ա. Միրաքյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան